ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Հ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 2222
14 նոյեմբեր 2018թ.

«ՌԱԶՈՎԱԼՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝ ԱՂԱՍԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, ՊԱՐՈՅԱՆ 6
ՀԵՌ՝ 094200043, ԷԼ ՓՈՍՏ՝ aararat7777713@mail.r

Հարգելի պարոն Մերոպյան.

Ալավերդու համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ռազովալո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2018 թվականի օգոստոսի 3-ին կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով «Ալավերդի համայնքում փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնում աշխատանքների գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մաս կազմող Հավելված թիվ 2-ով՝ Օրացուցային գրաֆիկով (Համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 03.10.2018թ) նախատեսված ժամկետում «Ռազովալո» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2018 թվականի նոյեմբերի 2-ը կատարել 5 900 000 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 1 288 320 ՀՀ դրամի աշխատանքներ: «Ռազովալո» ՍՊԸ-ին բազմիցս զգուշացվել է, որ Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն սահմանված ժամկետում, այլապես Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը ընկերության նկատմամբ կլինի անխուսափելի:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 4 611 680 ՀՀ դրամ չկատարված աշխատանքի մասով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ Ալավերդու համայնքապետարանը 2018 թվականի

նոյեմբերի 14-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի օգոստոսի 3-ին կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով պայմանագիրը:

Միարժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն «Ռազովալո» ՍՊԸ-ից կգանձվի 29500 ՀՀ դրամ տուգանք և 23058,4 ՀՀ դրամ տույժ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ**

Կապ. Ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար՝ Վ. Պապինյան